ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը ,ազգանունը,զբաղեցրած պաշտոնը

Արա Չորանյան՝ <<Ստեփանավանի պրոֆ. Ա.Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ>> ՊՈԱԿ-ի տնօրեն

2. Գործուղման վայրը և ժամկետները

Իտալիայի հանրապետություն, Տոլինյո,Կաշա, 2026թ. ,հուլիսի 14-21

3.Հրավիրող կողմը

ԷՋԻՆԱ (EGINA European Grants International Academy Srl) ուսումնական կենտրոն :

4.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

<<Էրազմուս + ELE-VET>> կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում փորձի փոխանակման այց :

5.Քննարկված թեմաները

Ծրագրի ընթացքում ձեռք բերված գիտելիքների, հմտությունների և փորձի կիրառումը ուսումնական հաստատությունում՝ որպես մասնագիտական կրթության բաղադրիչ:

Տարբեր մասնագիտությունների ուղղությունների շրջանակներում մրցույթների կազմակերպման հարցեր:

6.Հանդիպումները,ելույթները,բարձրացված կամ քննարկված հարցերը

Ելույթ ունեցան ծրագրի համակարգողները,գործընկեր կազմակերպությունները և միջազգային ՄԿՈՒ ոլորտի փորձագետները:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Շարունակել միջազգային համագործակցությունը,խթանել փորձի փոխանակումը և կիրառել ծրագրի ընթացքում ներկայացված արդյունավետ կրթական ծրագրերը՝ մասնագիտական կրթական ոլորտում:

Գործընկերային ցանցի ընդլայնման նպատակով նախնական պայմանավորվածությունների ձեռքբերում:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվեց կիրառել նախագծային և խնդրահենք ուսուցման (Problem-Based Learning PBL) մեթոդը՝ համահունչեցնելով խնդիրների լուծումները ՄԱԿ-ի Կայուն զարգացման 17 նպատակներին, և արդյունքները ներկայացնել ազգային հաքաթոնին՝ դրանով խթանելով ուսանողների թվային,ձեռնարկատիրական հմտությունների զարգացումը,ինչպես նաև ծանոթացնելով դասավանդողների ժամանակակից կրթական մեթոդներին և արհեստական բանականության գործիքների արդյունավետ կիրառմանը:

Առաջիկա ամիսներին գործընկեր քոլեջներով կազմակերպել հաքաթոններ, որի արդյունքում ուսանողները կկարողանան ինքնուրույն ներկայացնել որոշակի նախագծեր:

<<Ստեփանավանի Ա.Քալանթարի անվան

պետական գյուղատնտեսական քոլեջ>> ՊՈԱԿ-ի

տնօրեն՝ Ա.Ա.ՉՈԲԱՆՅԱՆ 22.07.2026թ.